ՀԻՄԱՎՈՐՈՒՄ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

Գավառ համայնքի 2022 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվության որոշման նախագիծը մշակվել է «Տեղական ինքնակառավարման մասին» և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքների պահանջներով:

1. Բյուջեի եկամուտների կատարողականը:

2022 թվականի Գավառ համայնքի վարչական բյուջեի եկամուտները ծրագրով նախատեսված 2,012,060.0 հազար ՀՀ դրամի դիմաց փաստացի կատարվել է 2,000,414.6 հազար ՀՀ դրամ, որը կազմում է 99.4 %, արձանագրելով տարեկան ծրագրային ցուցանիշի 0.6 % թերակատարում, որը կազմում է 11,645.4 հազար ՀՀ դրամ:

Սեփական եկամուտների դիմաց նախատեսված 641,280.9 հազար ՀՀ դրամի դիմաց փաստացի կատարվել է 629,635.5 հազար ՀՀ դրամ, որը կազմում է 98.2 %:

Հաշվետու տարում վարչական բյուջեի հավաքագրված եկամուտների 31.5 %-ը ապահովվել է սեփական եկամուտների հաշվին, իսկ 68.5 %-ը՝ պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաների, նպատակային հատկացումների (սուբվենցիաներ) և պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի ֆինանսավորման հաշվին:

Գույքային հարկեր անշարժ գույքից համայնքի բյուջեի մուտքերը կազմել է 98,286.0 հազար ՀՀ դրամ՝ կատարվելով 98.2 %-ով, ապահովելով բյուջեի եկամուտների 4.9 %-ը, իսկ գույքահարկ փոխադրամիջոցներից համայնքի բյուջեի մուտքերը կազմել է 331,295.9 հազար ՀՀ դրամ՝ կատարվելով 106.9 %-ով, ապահովելով բյուջեի եկամուտների 16.6 %-ը:

Տեղական տուրքերի գծով համայնքի բյուջեի մուտքերը կազմել է 8,301.2 հազար ՀՀ դրամ՝ կատարվելով 94.1 %-ով, ապահովելով բյուջեի եկամուտների 0.4 % -ը:

Պետական տուրքերի գծով համայնքի բյուջեի մուտքերը կազմել է 12,689.9 հազար ՀՀ դրամ՝ կատարվելով 126.9 %-ով, ապահովելով բյուջեի եկամուտների 0.6 % -ը:

Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի մասին ՀՀ օրենքով Գավառ համայնքին նախատեսվել էր ֆինանսական համահարթեցման դոտացիա՝ 1,356,159.8 հազար ՀՀ դրամ, իսկ պետական բյուջեից տրամադրվող նպատակային հատկացում (սուբվենցիաներ՝ ազգային նվազարանների գծով) կազմել է 10,164.9 հազար ՀՀ դրամ, որոնք ամբողջովին ֆինանսավորվել են:

Գույքի վարձակալությունից վճարները 2022 թվականի բյուջեով նախատեսված 47519.4 հազար ՀՀ դրամի դիմաց համայնքի բյուջե մուտք է եղել 39,254.7 հազար դրամ՝ կատարվելով 82.6 %-ով, ապահովելով բյուջեի եկամուտների 2 % -ը:

Պետության կողմից պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի ֆինանսավորման համար պետական բյուջեից ստացվող միջոցները կազմել է 4,454.4 հազար ՀՀ դրամ, որն ամբողջովին ֆինանսավորվել է:

Տեղական վճարների մուտքերը կազմել է 136,398.0 հազար ՀՀ դրամ՝ կատարվելով 83.8 %-ով, ապահովելով բյուջեի եկամուտների 6.8 % -ը:

Ինքնակամ կառուցված շենքերի և շինությունների օրինականացման վճարներից մուտքերը կազմել է 7,825.9 հազար ՀՀ դրամ՝ կատարվելով 230.2 %-ով, ապահովելով բյուջեի եկամուտների 0.4 % -ը:

Վարչական իրավախախտումների համար պատասխանատվության միջոցների կիրառումից եկամուտները կազմել է 223.3 հազար ՀՀ դրամ՝ կատարվելով 33.5 %-ով:

Օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված՝ համայնքի բյուջեի մուտքագրման ենթակա այլ եկամուտները կազմել է 3409.8 հազար ՀՀ դրամ՝ կատարվելով 210.5 %-ով:

2022 թվականի բյուջեով ֆոնդային մասի եկամուտ է ծրագրավորվել 1,245,218.2 հազար ՀՀ դրամ, որից՝ ոչ ֆինանսական ակտիվների իրացումից մուտքեր՝ 205,149.2 հազար ՀՀ դրամ, տարեսկզբի ազատ մանացուրդ՝ 131,481.8 հազար ՀՀ դրամ, վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե կատարվող հատկացումներից մուտքեր՝ 385,000.0 հազար ՀՀ դրամ, իսկ Պետական բյուջեից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումները (սուբվենցիաներ) կազմել է 523587.2 հազար ՀՀ դրամ: Ֆոնդային բյուջեի եկամուտները կատարվել է 1066.263.4 հազար ՀՀ դրամով, կամ 85.6%-ով:

Գավառ համայնքի 2022 թվականի վարչական բյուջեի եկամուտների կատարողականը ըստ վարչական շրջանների և առանձին եկամտատեսակների ունի հետևյալ կառուցվածքը՝ համաձայն հավելված 1-ի:

2. Բյուջեի ծախսերի կատարողական

2022 թվականի վարչական բյուջեի ծախսերը կազմել է 2,012,060.0 հազար ՀՀ դրամ, որը կատարվել է 1,886,517.4 հազար ՀՀ դրամով, կամ 93.8 %-ով:

Գավառ համայնքի 2022 թ. վարչական բյուջեի ծախսային մասն ըստ գործառական դասակարգման ունի հետևյալ կառուցվածքը.

Ծախսերի անվանումը	Պլան	Փաստացի	Տոկոս
Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ	**464190,1**	**435496,5**	**93,8**
Օրենսդիր և գործադիր մարմիններ	388729,2	375762,9	96,7
Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	2060,9	1951,4	94,7
Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ (այլ դասերին չպատկանող)	73400,0	57782,2	78,7
Պաշտպանություն	1565,0	662,9	42,4
Տնտեսական հարաբերություններ, այդ թվում՝	89130,0	72209,4	81,0

Գյուղատնտեսություն	937,3	937,3	100,0
Ոռոգում	500,0	480,0	96,0
Ճանապարհային տրանսպորտ	87692,7	70792,1	80,7
Շրջակա միջավայրի պաշտպանություն	188940,0	172530,1	91,3
Բնակարանային շին. և կոմունալ ծառայություն	56621,6	57388,6	101,4
Առողջապահություն	18000,0	17915,0	99,5
Հանգիստ, մշակույթ և կրոն	79409,0	69934,9	88,1
Կրթություն	702204,3	658477,3	93,8
Սոցիալական պաշտպանություն	12000,0	8967,0	74,7
Պահուստային ֆոնդ	400000,0	392935,7	98,2
ԸՆԴԱՄԵՆԸ	**2012060,0**	**1886517,4**	**93,8**

Գավառ համայնքի 2022թ. վարչական բյուջեի ծախսային մասը ունի հետևյալ կառուցվածքը ըստ տնտեսագիտական դասակարգման

Ծախսերի անվանումը		Պլան	Փաստացի	Տոկոս
Աշխատողների աշխատավարձեր	4111	323527,8	318300,7	98,4
Պարգևատրում	4112	10000,0	10000,0	100,0
Բանկային ծառայությունների ծախսեր	4211	131,6	197,5	150,1
Էներգետիկ ծառայություններ	4212	23000,0	25479,1	110,8
Կոմունալ ծառայություններ	4213	1800,0	1480,6	82,3
Կապի ծառայություններ	4214	2870,0	2268,4	79,0
Ապահովագրական ծախսեր	4215	400,0	291,0	72,8
Ներքին գործուղումներ	4221	2000,0	115,0	5,8
Արտասահմանյան գործուղումներ	4222	5000,0	4871,4	97,4
Համակարգչային ծառայություններ	4232	2162,3	1753,2	81,1
Աշխատակազմի մասնագիտական զարգացման ծառայություն	4233	760,0	401,0	52,8
Տեղեկատվական ծառայություններ	4234	8790,0	6525,2	74,2
Ներկայացուցչական ծախսեր	4237	5500,0	5015,3	91,2
Ընդանուր բնույթի այլ ծառայություններ	4239	31900,0	24883,5	78,0
Մասնագիտական ծառայություններ	4241	20970,0	12267,0	58,5
Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում	4251	96230,0	76169,2	79,2
Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում	4252	6250,0	5183,6	82,9
Գրասենյակային նյութեր	4261	2990,0	2687,7	89,9
Տրանսպորտային նյութեր	4264	8500,0	7544,5	88,8
Առողջապահական և լաբորատոր նյութեր	4266	800,0	0,0	0,0
Կենցաղային և հանրային սննդի նյութեր	4267	2740,0	2275,8	83,1
Հատուկ նպատակային այլ նյութեր	4269	6565,0	5096,8	77,6
Սուբսիդիաներ	4511	927168,4	875705,0	94,4

Ընթացիկ դրամաշնորհ	4637	12284,9	12049,0	98,1
Կապիտալ դրամաշնորհ	4655	38620,0	28048,1	72,6
Այլ կապիտալ դրամաշնորհ	4657	32600,0	31340,0	96,1
Այլ նպաստներ բյուջեից	4729	20400,0	16935,0	83,0
Նվիրատվություն այլ շահույթ չհետապնդ. կազմակերպ.	4819	13000,0	12067,0	92,8
Պարտադիր վճարներ	4823	4100,0	3991,1	97,3
Այլ ծախսեր	4861	1000,0	640,0	64,0
Պահուստային ֆոնդ	4891	400000,0	392935,7	98,2
ԸՆԴԱՄԵՆԸ		**2012060,0**	**1886517,4**	**93,8**

Վարչական բյուջեի չկանխատեսված կամ նախատեսված ծախսերի լրացուցիչ ֆինանսավորման համար նախատեսվել էր 15,000.0 հազար ՀՀ դրամ պահուստային ֆոնդ, որից Գավառ համայնքի ավագանու համապատասխան որոշումներով ծախսվել է 8,813.7 հազար ՀՀ դրամ: Այդ թվում՝

1. «Մատենա– առաջնորդության և մասնագիտական զարգացման դպրոց» ՓԲԸ-ին – 1299.5 հազար ՀՀ դրամ «ՀՀ համայնքների արդյունավետ կառավարում» համայնքային պաշտոնյաների մասնագիտական զարգացման ծրագրի շրջանակներում մատուցվող կրթական ծառայությունների համար:

2. Հայաստանյաց Առաքելական Սուրբ Եկեղեցու Գեղարքունյաց Թեմ - 300.0 հազար ՀՀ դրամ՝ Սարուխան բնակավայրի Սուրբ Գևորգ եկեղեցու կոմունալ տարեկան ծախսերը կատարելու համար:

3. «Գավառ համայնքի կոմունալ սպասարկում և բարեկարգում» ՀՈԱԿ - 1,230.0 հազար ՀՀ դրամ պոլիէթիլենային 60 լիտրանոց աղբարկղների ձեռքբերման համար:

4. «Գանձակի երաժշտական դպրոց» ՀՈԱԿ -3,500.0 հազար ՀՀ դրամ՝ ռոյալի ձեռքբերման համար:

5. «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ– 102.2 հազար ՀՀ դրամ՝ Գեղարքունիք, Լանջաղբյուր, Կարմիրգյուղ և Ծաղկաշեն բնակավայրերում խմելու ջրի որակի հետազոտության աշխատանքների իրականացման համար:

6. «Կոտայք և Գեղարքունիք ԿԿԹԿ» ՍՊԸ-ը -1,682.0 հազար ՀՀ դրամ 20.09.2016 թվականին կնքված պայմանագրով նախատեսված ընկերության՝ 2022 թվականի օգոստոս- դեկտեմբեր ամիսների գործունեության և պահպանման ծախսերը հոգալու համար:

7. 2022 թվականի փետրվարի 18-ի լույս 19-ի գիշերը տեղի ունեցած ուժեղ քամու հետևանքով Գավառ քաղաքի Զոհված Ազատամարտիկների 2 նրբանցք թիվ 5 (նախկին Ազատության թիվ 61) հասցեում գտնվող բազմաբնակարան բնակելի շենքի տանիքին պատճառված վնասվի վերականգնման համար բնակիչներին անհրաժեշտ նյութերով օժանդակելու նպատակով - 700.0 հազար ՀՀ դրամ:

2022 թվականի ֆոնդային բյուջեի ծախսերը կազմել է 1,245,218.2 հազար ՀՀ դրամ, որը կատարվել է 1,059,457.9 հազար ՀՀ դրամով, կամ 85.1 %-ով:

Գավառ համայնքի 2022 թ. ֆոնդային բյուջեի ծախսային մասն ըստ գործառական դասակարգման ունի հետևյալ կառուցվածքը.

Ծախսերի անվանումը	Պլան	Փաստացի	որից՝ սուբվենցիա	Տոկոս
Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ	**181947,8**	**112215,7**	**18297,9**	61,7
Օրենսդիր և գործադիր մարմիններ	147897,8	85300,5	18297,9	57,7
Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	34050,0	26915,2	0,0	79,0
Պաշտպանություն	1000,0	980,0	0,0	98,0
Տնտեսական հարաբերություններ	440850,8	428221,0	293452,3	97,1
Շրջակա միջավայրի պաշտպանություն	7045,0	7043,4	0,0	100,0
Բնակարանային շին. և կոմունալ ծառայություն	190103,1	117648,3	68389,6	61,9
Հանգիստ, մշակույթ և կրոն	305577,8	296650,6	80036,6	97,1
Կրթություն	118693,7	96698,9	61513,6	81,5
ԸՆԴԱՄԵՆԸ	**1245218,2**	**1059457,9**	**521690,0**	**85,1**

Գավառ համայնքի 2022 թ. ֆոնդային բյուջեի ծախսային մասն ըստ տնտեսագիտական դասակարգման ունի հետևյալ կառուցվածքը.

Ծախսերի անվանումը		Պլան	Փաստացի	որից՝ սուբվենցիա	Տոկոս
Շենք և շինությունների ձեռքբերում	5111	486,5	486,5	0,0	100,0
Շենք և շինությունների կառուցում	5112	428913,5	353306,6	241256,5	82,4
Շենք և շինությունների կապիտալ վերանորոգում	5113	580553,1	484342,3	280433,5	83,4
Տրանսպորտային սարքավորումներ	5121	49009,4	49597,7	0,0	101,2
Վարչական սարքավորումներ	5122	5000,0	3700,0	0,0	74,0
Այլ մեքենաներ և սարքավորումներ	5129	144599,0	138611,3	0,0	95,9
Նախագծահետազոտա-կան ծախսեր	5134	36656,7	29413,5	0,0	80,2
ԸՆԴԱՄԵՆԸ		**1245218,2**	**1059457,9**	**521690,0**	**85,1**

Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե կատարվող հատկացումը կազմել է 384,122.0 հազար ՀՀ դրամ, ոչ ֆինանսական ակտիվների իրացումից մուտքերը կազմել է 27,072.4 հազար ՀՀ դրամ, որից ծախսվել է 26,265.2 հազար ՀՀ դրամ, իսկ դիֆիցիտի ֆինանսավորման աղբյուր հանդիսացող 131481.8 հազար ՀՀ դրամ տարեսկզբի ազատ մնացորդը ծախսվել է ամբողջությամբ: